ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 3

Հայտերի գնահատման վերջնական նիստի

«SF6 գազի լիցքավորման կոմպրեսորի» ձեռքբերման համար ստացված հայտերի գնահատման նիստի

Գնման ծածկագիրը - **ՔԳՀԿ 06/26**
Գնման տեսակը - **բաց մրցույթ**
Գնումը ներառված է ՔԳՀԿ 2026-2028թթ. ներդրումային ծրագրում 6-րդ հավելվածում

2026թ. հունիսի 18-ին, Ժամը՝ 11:10-ին Ք. Գորիս, ՀՀ

Նիստին մասնակցում են՝	
Հանձնաժողովի նախագահ	Արամ Մելքումյան
Հանձնաժողովի անդամներ՝	Գավրուշա Աթայան Սահակ Մկրտչյան Արթուր Մովսիսյան Արմինե Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան

1. Գնահատող հանձնաժողովը ծանոթանալով ներկայացված տեխնիկական առաջարկներին առաջարկել էր մինչև 2026թ մայիսի 15-ը պահանջել բոլոր վեց կազմակերպությունից պարզաբանել և լրացնել հայտում ներկայացված տեղեկատվությունը: Արման Պետրոսյանը տեղեկացրեց, որ UKRHYDROATOM Corporation և WAT ENGINEERING LLC կազմակերպությունները մինչև սահմանված վերջնաժամկետը պահանջված պարզաբանումները և լրացումները պատշաճ կերպով չեն ներկայացրել: Ուստի տվյալ հայտատուների տրամադրած տեղեկատվությունը թերի է և ոչ բավարար պարզաբանման և թերի տեղեկատվություն պարագայում Հայտերը մերժվում են՝ մրցութային փաթեթի 5.3 դ և 6.4 կետերի համաձայն: Իսկ մնացած չորս կազմակերպությունների կողմից ստացված պարզաբանումների արդյունքում հանձնաժողովը հայտերը վերջնական գնահատել է հետևյալ կերպ. Չորս կազմակերպությունները առաջարկել են գերմանական արտադրության ընդունելի ապրանքանիշի Dilo կոմպրեսոր, որը համապատասխանում է տեխնիկական բնութագրի պահանջներին:

2. Գնահատող հանձնաժողովը ստացված հայտերի ուսումնասիրության ընթացքում արձանագրել է, որ ներկայացված Buttenberg &MP BBMPS-ի, Global Energy Group ՍՊԸ-ի, «Վահե Թոխսանց» ԱՁ-ի և «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի կազմակերպությունների կողմից հայտերը բավարարում են մրցութային փաթեթի որակավորման պահանջներին և չափանիշներին: Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը առաջարկեց բացել ֆինանսական առաջարկները առցանց Կուպա համակարգում ս.թ. մայիսի 18-ին:

3. Ֆինանսական հայտերը բացվեցին ս.թ. մայիսի 18-ին ժամը 17:05: Coupa համակարգում առցանց բացվեցին հայտատուների կողմից ներկայացված առաջարկները, և արձանագրվեց հետևյալ արդյունքները՝

N	Մասնակից	Գնային առաջարկ, առանց ԱԱՀ	ՀՀ դրամ համարժեք
1	Buttenberg &MP BBMPS	34,553.90 Եվրո	15,564,804
2	«Վահե Թոխսանց» ԱՁ	20,889,820 ՀՀ դրամ	20,889,820
3	«Ի Սի Էներջի» ՍՊԸ	28,829,990 ՀՀ դրամ	28,829,990
4	Global Energy Group LLC	82,680,73 ԱՄՆ դոլար	31,832,081

*Փոխարկման համար կիրառվում է 385 ՀՀ դամ 1-ԱՄՆ դոլարի և 450.45 ՀՀ դրամ 1 Եվրո փոխարժեքը:

4. Գնահատման ընթացքում արձանագրվել է, որ տեղական մասնակիցների ֆինանսական առաջարկները ներառում են մաքսազերծման և ներմուծման հետ կապված ծախսերը, մինչդեռ միջազգային մասնակիցների առաջարկները չեն ներառում այդպիսի ծախսեր: Գնահատող հանձնաժողովը հավասար և համադրելի գնահատում ապահովելու նպատակով կիրառել է «ընդհանուր գնահատված արժեքի» մեթոդաբանությունը: Հետևաբար, գնահատման նպատակով Buttenberg &MP BBMPS և Global Energy Group LLC առաջարկների համար կիրառվել է մաքսազերծման և ներմուծման հետ կապված գնահատված ծախսերը ըստ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագների, որոնք ավելացվել են գնահատվող գնին՝ համադրելի առևտրային հիմք ապահովելու նպատակով: Գնահատող հանձնաժողովը անհրաժեշտ է համարել այս մոտեցումը՝ ապահովելու թափանցիկությունը, մասնակիցների նկատմամբ հավասար պայմանները և վերաբերմունքը և մատակարարման ամբողջական արժեքի ճշգրիտ համեմատությունը:

N	Նկարագրություն	Buttenberg &MP BBMPS	«Վահե Թոխսանց» ԱՁ	«Ի Սի Էներջի» ՍՊԸ	Global Energy Group LLC
1	Ապրանքի գինը	34,553.90 Եվրո	20,889,820 ՀՀ դրամ	28,829,990 ՀՀ դրամ	82,680,73 ԱՄՆ դոլար
2	Մատակարարման արժեքը	Ներառված է	Ներառված է	Ներառված է	Ներառված է
3	Մաքսազերծում	Ներառված չէ	Ներառված է	Ներառված է	Ներառված չէ
4	Նախատեսվող մաքսազերծման արժեք 10% ԱՏԳ ԱԱ ծածկագիր 848180	3,455.39 Եվրո	Ներառված է	Ներառված է	8,268.07 ԱՄՆ դոլար
5	Ընդհանուր գնահատված արժեք	38,009.29 Եվրո	20,889,820 ՀՀ դարմ	28,829,990 ՀՀ դարմ	90,948.80 ԱՄՆ դոլար
6	Գնահատման հիմք ՀՀ դրամ համարժեք	17,121,285	20,889,820	28,829,990	35,015,289

7	Գնահատված առաջարկների դասակարգում	1	2	3	4

5. Գնահատող հանձնաժողովը, ծանոթանալով գնային առաջարկներին, նշեց, որ նախահաշվային արժեքը կազմում է 30,180,150 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Հաշվի առնելով ստացված արդյունքները որոշվեց անուրդ չիրականացնել, քանի որ նվազագույն առաջարկված գինը նախահաշվային արժեքից ցածր է 48.43%-ով: Հանձնաժողովը առաջարկեց հաղթող ճանաչել նվազագույն գին առաջարկած Buttenberg &MP BBMPS -ին՝ 34,553.90 (երեսուն չորս հազար հինգ հարյուր հիսուն երեք կետ 90/100 ինն ցենտ) Եվրո, առանց ԱԱՀ: Պայմանագրի շնորհումը կատարել կազմակերպության բոլոր հաստատումները անցնելուց հետո:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների միաձայն համաձայնվեցին առաջարկներին:

Հանձնաժողովի նախագահ	Արամ Մելքումյան	
Հանձնաժողովի անդամներ՝	Գավրուշա Աթայան	
	Սահակ Մկրտչյան	
	Արթուր Մովսիսյան	
	Արմինե Մանուկյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան	